

անուանք առաջնոյն Կոստանդին եպիսկոպոս (փոխանորդ պատրիարքին, Բ. Բասիլ) մատրապոսիա Ուռհայ քաղաքի զ. Սիմէոն Սառանա զ. Թէոդոս Դարգմանից եպիսկոպոս. և. Տէր Աթանաս Նփրկերաց եպիսկոպոս զ. Թէոդորոս Ամասիոյ եպիսկոպոս Սորա ամենեքեան հրամանաւ արքեպիսկոպոսին Անտիոքա եկին առ մեզ ի միարանեալ Ժողովու և միաւորեալ ընդ միմեան հաւատով՝ զմիութիւն խոստովանելովք։*

Այս բոլոր վկայութիւնները միաձայն հաստատում են, որ Օձնեցու և Աթանաս Գ. ի օրով Հայոց և Ասորոց մէջ միութիւն հաստատելու նպատակով մի ժողով է գումարուած. բայց թէ Սոսրովկի Ա. և Գ. թղթերի մէջ յիշուածը նոյն է այս ժողովի հետ, թէ ոչ, հետեւալ պրակներէից կտեսնենք։

(Նախադասութիւն)

Գ. Վ. Յովսէփեան.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

ԿՈՎԿԵՍԻ „ԵՆԸՐԴՈՒՄԸ“ ԵՐԵՎԱՆԵՐԸ.

Ամեն ասեմ մեզ, որովհետեւ ոչ աւարիք մընաւ ի փոքրկանց յայցանէ՝ եւ ոչ ինձ աւարիք.

Մատ. Գ. ԻԵ, 46:

Այսպէս ոչ եւ կամք առաջի ճոր խոյ՝ որ յերկինս եւ երե կորիցե մի ի փոքրկանց յայցանէ:

Մատ. Գ. ԺԸ, 14:

„Անարգուած“ երեխաներ է անուանել Ռուսաց մեծ հոգեբան— վիպասան Դոստոևսկին զեռահաս յանցաւորներին: Հասա-

րակութեան զէպի նրանց ունեցած պարտականութիւնները աւելի հակիրճ և աւելի պարզ ցոյց տալու համար դժուար է աւելի ճիշտ անուն գտնել, քան ահամայ յանցաւորներէ: Միթէ նոցա անարգողը հասարակութիւնը չէ, որ ստեղծելով պայմաններ, թոյլ է տալիս ի բնէ մաքուր մանկական հոգուն զոյութեան կռուի համար զէպի չար ծանապարհը շեղուել: Արգեօք հասարակութեան պարտականութիւնը չէ խնամք տանել, սրբել յիշեալ կեղաւր և օրէնքով անգիտակ յանցաւոր ծանաչուածներին անարգանքից մաքրելուց յետոյ, հասարակութեան համար իրիւն օգտակար քաղաքացի ընդունել իւր շրջանում:

Ընչպէս ամէն ընկերավարական խնդիրներ մատաղահաս յանցաւորներ ուղղելու գաղափարը սկիզբ առնելով մարդկութեան սակաւաթիւ բարեկամներէ սրտերում, հասարակական զիտակցութեան մէջ խիստ զբաւառութեամբ բաց արեց իւր համար ծանապարհ, որի անհրաժեշտութիւնը երկար ժամանակից յետոյ հազիւ կարողացաւ հասարակութիւնը խոստովանել: Բարոյապէս ընկած պատանեկութիւնը ուղղելու համար հաստատութիւններ հիմնելու առաջին փորձը մենք հանդիպում ենք երկու դար սրանից առաջ քրէական իրաւանց մեծ բարենորոգիչ Բեկկարայի հայրենիքում— իտալիացում 1735 թուին այստեղ հիմնուում է սր. Միքայէլի Casa di Corezione ն մի հաստատութիւն, որը ձեռք առաւ ուղղելու յանցաւոր պատանիներ: Դարուս առաջին կիսին այս գաղափարը արագ տարածուում է արեւմտեան Եւրոպայի պետութեանց մէջ և այժմս արդէն գոյութիւն ունին զեռահասաների համար տասնեակ այդպիսի ուղղիչ հաստատութիւններ: Վերջիններից մի քանիսը, ինչպէս օր. Փրանսիայի համաշխարհային հոչակ սաւացած Միտրէյսկի զաղութը խնամում է այժմս մի քանի հարիւր երեխաներ: Ուղղիչ հաստատութիւններ նպատակն է, որ յանցաւոր երեխաները, որոնք իւրեանց շրջապատող հանգամանքների անյաջող պայմանների շնորհիւ են այդպէս զժրախտացած, իւրեանց մեղքի համար ոչ թէ պատժուին, այլ խնամուին և նորից կրթելով ճոցաւանարգուած և անրիմ հոգիները վերադառնան:

* № 730 թ 287. փակագծի մէջ դրածը լատինէն էր 2-րդ անգամ Բ. եր. 267.

պայծառացնեն և մաքրեն: Այս նպատակին հասնելու ամենագորաւոր միջոցներից մէկը պէտք է համարել անկասկած փորձուած դաստիարակների մշտական և համապատասխան ազդեցութիւնը: Մինչև 1864 թ. Ռուսաց օրէնսդրութեանը դեռահաս յանցաւորներին ուղղելու գաղափարը օտար էր: Միայն Աղեքսանդր II կայսեր դատաստանական կանոնադրութիւնները առաջին անգամ քարոզեցին այդ միտքը. իսկ 1866 թ. դեկտ. 5-ին ուղղիչ ապաստանարանների մասին օրէնք հրատարակուեց, որով հրաւիրուում էին մանաւոր անձինք, զաւառական վարչութիւնք, հասարակութիւնք և հոգեւոր վարչութիւնք հիմնելու այգլիսի հաստատութիւններ: Անհիմն չէր օրէնսդրի այդ գործը մանաւոր մարդկանց յանձնելը. ուղղելու գործը մարդկանցից անձնուիրութիւն է պահանջում այն ինչ կառավարչական մարմինները զժուար թէ կարողանան նպատակին ծառայել: Ինչպէս ամէն մի նոր երեւոյթ, այս գործն ևս չէր կարող արագ յառաջադիմել: Ներկայումս ամբողջ Ռուսաց կայսերութեան մէջ միմիայն 35 այգլիսի հիմնարկութիւններ կան, ուր ապաստան են գտել 1500-ի չափ երեխաներ, այն ինչ ըստ վիճակագրական տեղեկութեանց գործնից մի քանի անգամ աւելի քանակութեամբ երեխաներ ամենայն տարի դատաւարաւում են բանտարկութեան: Երոնց տեղ պիտի բռնէին ուղղիչ հաստատութիւնները: Սակայն չպէտք է աչքից բաց թողնել այն ուրախաթիթ իրողութիւնը, որ ռուս հասարակութիւնը տարեցտարի աւելի ու աւելի ջանք է նուիրում կատարելու իւր պարտականութիւնները զժրախա երեխաների խնամելու գործում և ամենայն տարի երեան են գալիս նորանոր ուղղիչ հաստատութիւններ: Թէ այս գործը որքան պետական մեծ նշանակութիւն ունի ապացոյցի կարօտ չէ, որովհետեւ թագաւոր կայսրը ամենողորմածարար իւր հովանաւորութեան տակ է առել այդ հաստատութիւնները:

Դուրս Կովկասում աւելի զգալի է յանցաւոր երեխաների ուղղելու կարիքը, քան կայսրութեան մի որ և է ուրիշ մասում: Ներկայումս Կովկասը իւր անտեսական ոյժերի

զարգացման սկզբնական շրջանումն է գտանում: Այդ շրջանը գոյութեան համար մի առանձին եռանդուն կռուի է բռնուած, որին իրր հեռեանք շարունակ երեան են գալիս յաղթուածներ, որոնք զուրկ կոխը շարունակելու միջոցներից, մնում են հացի կարօտ: Իսկ կարիքը, մանաւանդ դեռահասների շրջանում, յանցաւորութիւն յառաջ բերելու զխաւոր պատճառներից մէկն է: Թուանշանները, այդ ճարտարախօս վկաները, ահիւյտանի կերպով հաստատում են այդ կարծիքը. 1894 — 96 թ. Կուբանեան շրջանի Տփլիսի և Բաղուայ նահանգների բանտերում այսինքն տնտեսապէս աւելի զարգացած երկրներում դեռահասների միջին թիւը հասել էր մինչև 109, 59 և 147. իսկ Դաղստանի շրջանի Գանձակի և Չերնօմորեան նահանգներում զանուում էին 11, 9 և 6 դեռահասների: Հետեապէս և Կովկասեան նահանգների տնտեսական զարգացումը որքան առաջ գնայ, այնքան աւելի մեծ քանակութեամբ դեռահաս յանցաւորներ կտայ ազգաբնակչութիւնը: Սակայն հասարակութեան համար զխաւոր վտանգը ոչ թէ դեռահաս օրինազանցների գոյութիւնն է, որքան ժամանակին չուղղուելով ապագայում հասակաւոր և չարութիւններն արդէն արմատացած յանցաւորներ ունենալն է: Համեմատարար անկիրթ շրջանի պայմանները, ուր ընկնում են մատաղահաս չարագործները իւրեանց պատիժը բանտելում կրելուց յետոյ, աւելի վտանգաւոր են դարձնում հասարակութեան համար: Կովկասի յայտնի յանցաւորների մեծամասնութիւնը, որոնց համար աւարառութիւնը մի արհեստ է, իւրեանց չարագործութիւնները սկսել են պատանեկական շրջանից, այս կողմից բուական է յիշել յայտնի Տաթո Յուլալիձէին, որը մի քանի տարի անընդհատ Կովկասեան քաղաքների բնակիչներին սարսափի մէջ էր պահում: Հասարակութեան դէմ նա սկսեց կռուել մօտաւորապէս 12 տարեկան հասակից ժամացոյց զողանալով: Բանի դեռ մատաղահաս օրինազանցների թիւը այնքան մեծ չէ, պէտք է աշխատել ժամանակին ուղղիչ միջոցներ ձեռք առնել, և եթէ բոլորովին արմատախիլ անելը անհնար է, գոնէ բուսկա-

նաչափ թուլացնել նոցա հասարակական ապահովութեան վերայ ունեցած ֆեոսական անգիգեութիւնը: Ահա այդ միտքը՝ ուղղիչ հաստատութիւններ հիմնելու ընդհանուր պատճառներին հետ միասին յառաջ բերաւ 1890 թ. սկզբներին ուղղիչ երկրագործ — արհեստաւորաց գաղութների և ապաստանարանների կոմիտեան ընկերութիւնը: Դժբախտաբար ապաստանարանի բացումը 1895-ին միայն կարողացաւ տեղի ունենալ (սեպտեմբերի 16-ին): Բացման ուշանալու պատճառը գաղութ կազմելու համար պետական յարմար հող չլինելն էր: Այդ եղաւ պատճառը, որ ընկերութիւնը նախ և առաջ ստիպուած էր Օկրոկանդոս գիւղում մասնաւոր մարդու կապալով վերցրած ագարակում ժամանակաւոր մի գաղութ հաստատել և երկրորդ, յարմար հողի մի կտոր գնել և ընկերութեան ունեցած գումարից արտաքոյ կարգի ծախքեր անել: Սկզբներում 25 սաների համար բացուած այդ գաղութը ընդունում էր գատապարտաւորներ կոմիտեի բոլոր տեղերից: Ծուռով երեւոյ, որ այդ թիւը անբաւարար է, ստիպուած եղան հասցնել մինչեւ 50-ի: Ամբողջ կոմիտեի համար միայն մի՛ ընդհանուր գաղութ հիմնելու անհրաժեշտութիւն կայ, որովհետեւ նորա նահանգներից և շրջաններից իւրաքանչիւրը՝ զեռահասակ յանցաւորների սակաւութեան պատճառով՝ առ այժմ առանձին առանձին ապաստանարանների կարիք չէ զգում և զգուար էլ թէ կարողանային պահել, որովհետեւ ուղղիչ հաստատութիւնների գոյութեան զլխաւոր աղբիւրը տուգանքների ընդհանուր գումարի մի որոշ մասն է կազմում, որը միջին հաշուով տարեկան հասնում է 6000 ռ. և եթէ աչքի առաջ ունենանք իւրաքանչիւր նահանգի առանձին բաժինը, կոեսնենք, որ մի քանի հարիւրի հազիւ հասնի: Ուղղութիւններին միտել հաւաքելով, նոցա ծախք բաւականաչափ կպահասի Տեղեկութիւններից երեւում է, որ կոմիտեան բանաւորում 1894—96 թ. եղել են երեք տարուայ ընթացքում 245 զեռահասակ յանցաւորներ: Նշանակում է տարեկան մօտաւորապէս 82: Աչքի առաջ ունենալով Օկրոկանի ուղղիչ գաղութում 1895

և 1896 թ. տեղաւորուող զեռահաս յանցաւորներին և գաղութում իւրաքանչիւրի առ սակաւ երկու տարի մնալու անհրաժեշտութիւնը պէտք է եղրականել, որ այդ գաղութը հիմնուած պէտք է լինի մօտաւորապէս 120 սաների համար, որպէս զի կարողանայ բաւականութիւն տալ կոմիտեի յիշեալ կարիքին:

Ուշադէս ամէն մի հիւանդութեան դէմ մղուած կռիւ, այսպէս և զեռահասների ուղղելու գործը նիւթական մեծ զոհարելութիւններ է պահանջում: Դորա համար հարկաւոր է լաւ վարչութիւն, իսկ այդպիսի վարչութիւնը իւր աշխատանքի փոխարէն լաւ վարձատրութիւն կպահանջէ: Հարկաւոր են յարմարաւոր շինութիւններ, արհեստանոցներ, այգի, բանջարանոց, նաեւ գիւղատնտեսութեամբ պարապելու համար դաշտ, վերջապէս լաւ կազմակերպուած զարոյց մի խօսքով պէտք է ունենալ այն ամէնը, ինչ որ անհրաժեշտ է սաների պահելու համար: Միայն այս բոլորը պատրաստ ունենալուց յետոյ կարելի է կրթել զեռահաս օրինադպեցներին և ապաստանարաններից դուրս գալուց յետոյ միջոց տալ ինքնուրոյն և ազնիւ կեանք վարելու: Կրկնում ենք, որ այս բոլոր կարիքները նիւթական մեծ զոհարելութիւն են պահանջում և ցաւալի է, որ մինչեւ այժմ չեն իրագործուել հիմնուած օրից սկսած: Կոմիտեան ուղղիչ գաղութների և ապաստանարանների ընկերութիւնը յաջողեցրել է ձեռք բերել Զեմօ Աւշալի գիւղում մի կտոր սեփական հող, որի համար ծախսել է մօտաւորապէս 8000 ռ., կառուցել է հինգ շէնք (26000 ռ. արժողութեամբ), բաց է արել երկու ոչ այնքան մեծ արհեստանոց (առաջագործութեան և կօշկակարութեան), հաստատել է սաների համար զրադիաութեան ուսուցումը, սկիզբ է դրել գիւղատնտեսութեան մշակելով գաղութին պատկանեալ հողը: Այս գաղութը հիմնուել է 1895 թ.: Այժմ զեռ աւելի բան կայ անելու, քան կատարուել է: Գաղութում չկայ եկեղեցի, չկայ հիւանդանոց, որի բացակայութիւնը կարող է կորստաբեր լինել բոլոր սաների առողջութեան համար. վարչութեան համար չկայ առանձին շինութիւն, որ անկաս-

ՍՏԵՅՈՒԱԾ ԳՐԱԵՐ



Ա. Իսահակեան. Երգեր ու Վերքեր. Ա. ղէքսանդրապոլ. 1898. 10 կոպ:

Պ. Մոնոեանց. Տիգրօնի կալանաւորը. Ա. ղէքսանդրապոլ. 1899. 15 կոպ:

Տեղեկագիր Բ. տարեշրջանի Ազգային կըրթարան—Որբանոցի ի Վկարոս. Վահրէ. 1899:

Բ. Խալաթեանց. Տոսն և իններորդ Գարի կապը. Թիֆլիս. 1890. 15 կոպ:

Ֆրանսուս Կոպպէ. Թագի համար. Ողբերգութիւն 5 դրօժ. թարգմ. Ֆրանսերէնէն Միլտի Մանուշարեանց. Բաղու. 50 կոպ:

Վանայ Սալ. Երկրորդ մաս. Ժողովեց Գէորգ Գ. Շէրէնց. Թիֆլիսի հայոց հրատարակչական Ընկ. № 150. Թիֆլիս. 75 կոպ:

ՐՈՎԱՆԳԱՌԹԻԻՒՆՔ ԱՅԳ. ՀԱՆԳԻՍՈՅ.



ԲԱԶՄԱՎԷՊ

(Սեպտեմբեր ամիս)

Հայ Ռուսնոցը. — Ատմեանց նահատակութեան ժամանակն և այլ հանգամանք. — Բնաշխարհի բառարան. — Միլիթար (բանաստ.). — Հանք և իրենց ստուգաբանութիւնն. — Կոստանդնուպոլսէն դէպի Անկիւրեա. — Մարաբա Մծուրնացի կամ կեղծ—Ազաթանդեզոս. — Ընդժողայ նաւագնացութիւն. — Գաղղ. արդի բանաստեղծութիւն. — Մագնիսական քուն. — Գրախօսական ակնարկներ. — Վերջին ողջոյնը առ ազատն Վենետիկ. — Պատասխանէք բանասիրի մը դիտողութեանց. — Հանդիս Հանդիսից. — Քաղաքական ամիս. — Ազգային արձագանք:

ՀԱՆԳԷՍ ԱՄՍՈՐԵԱՅ

(Սեպտեմբեր ամիս)

Ժողովածոյք առական Վարդանայ... բոս Հայագէտ Ն. Մառի. — Եղիսարեթուպոլսոյ հասարակութեան այն արածնութիւնն թէ օտարք չկարենան իւր մէջը բնակելի կը կորսնցնէ իւր ոյժը. — Պարսկաստանի հայերը. նրանց անցեալը ներկան և ապագան. — Խիկար և իւր իմաստութիւնն. — Տեղեկագիր Յովսէփ Իգմիլեանց գրական Յանձնաժողովոյ. — Տեղեկագիր քննական ուղեւորութեան մ' ի Հայո Վ. Բեւլի և Կ. Ք. Լեմանի. — Նոր հրատարակութիւնք. — Ազգային թերթերէ Ծաղկէփունջ. — Քաղաքական տեսութիւն:



կած կարող է ազդեցութիւն ունենալ նորա օրակութեան վերայ. չկայ ջրանցք, առանց որի հողը կանոնաւոր կերպով չի մշակուի. վերջապէս անհնար է գաղութի գուար բաց անել ամէն բաղխողի առաջ, որովհետեւ նա կարող է իւր մէջ առայժմս միայն 50 հողի պատասխարել Ծնորհիւ այդ բանի տաճնեակ երեխաներ ընթանում են այն ծանապարհով որ անգառնալի է. նոքա գնում են բանաւ Հեռեապէս և կարեւոր է շինութիւնը ընդարձակել Ընկերութիւնը իւր հիմնուած օրից սկսած մինչև այժմս մօտ 60000 ռ. ծախսել է. եթէ ոչ աւելի գոնէ նոյնքան էլ հարկաւոր է այժմս, որպէս զի ուղղիլ գաղութը իւր համապատասխան վիճակում լինի: Մինչդեռ մի քանի ժամանակ առաջ ընկերութեան զանաւարանը այնպիսի ցաւալի վիճակի մէջ էր որ շառերի զլխում ծնունց մի վրդովեցուցիչ միտք՝ փակել այս հիմնարկութիւնը, նախ քան նորա ծաղկելը: Միայն երբ բաւարարութիւն տրուի բոլոր վերը նշանակեալ կարիքներին այն ժամանակ կարելի կլինի համարձակութեամբ ասել որ Կովկասում «անարդուած» երեխաների ուղղելու գործը իւր պատշաճաւոր զիրքի մէջն է:

Կովկասի ընկերութիւնը հիմք դրեց այդ «ստուածահաճոյ» գործին: Աւելորդ է անգամ մտածել որ նա կթողնի այդ գործը կիսատ: կամ որ աւելի վառն է իւր անտարբերութեամբ կսպանէ նորան իւր սաղմի մէջ: Անհաւատալի է թուում որ ընկերութիւնը չուզենայ ջնջել այն անտարգանքը որ նա պատճառում է իւր անմեղ և ձեռնհաս անդամներին: Այն համակրութիւնը այն պատրաստականութիւնը որ ցոյց տուին մինչև այժմ հասարակութեան բոլոր խաւերի ներկայացուցիչները իրաւունք են տալիս կարծելու որ հասարակութիւնը դժուար բոլորներին օգնութեան կհասնի այն գործին որը իւր ջանքերի պտուղն է: Դժուար բոլորն հասել է. Կովկասում դեռահասաներ ուղղելու գործը նշանաւոր չափով նիւթական զոհարարութիւն է պահանջում: Փոքունքս այսօրիկ» օգնութեան են կանչում Միլիթի նոցա կոչը պէտք է մնայ «ձայն բարրաւոր յանապատի»:

Թարգմանութիւն

Գ.

